3520

3КСМ2(47.924)
И-21

*Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։*

## Ա. Լ. Կ. ՅԵ. Մ.

## II ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ЗКСМ г (4794)
Կ-21

ԱԴՐՊԵՏՀՐԱՏ.

Բաքու — 1927

ЗКСМ-Z (47.924)
Կ-21

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք։

# Ա. Լ. Կ. Յե. Մ.

## II ԿՈՆՖԵՐԱՆՍԻ

# ՎՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

1003
14333

ԱԴՐՊԵՏՀՐԱՏ.

Բաքու — 1927

ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
...ная Библиот...

40379 - ար.

Տպագրված է
«ԱԴՐՊԵՏՀՐԱՏ»-ի
տպարանում
Բաքու, Բ.-Մորսկայա 16.

24251-60

Գլավլիտ. 3837. Պատվեր 988. Տիրաժ 2000

# ԴԻՄՈՒՄ

## *ԱԿԿ (բ) Կենտրոնական Կոմիտեին*

Լենինյան Կոմսոմոլի համաադրբեջանյան 2-րդ կոնֆերանսը բոցավառ կոմյերիտական ողջույն է ուղարկում Ադրբեջանի Կոմկուսի (բ) Կենտրոնական Կոմիտեին—Ադրբեջանի պրոլետարիատի ու գյուղացիության առաջնորդին, Ադրբեջանի Լենինյան Կոմունիստական Յերիտասարդության Միության կազմակերպչին ու ղեկավարին:

Ադրբեջանի Կոմկուսի ուշադրության յեվ ղեկավարության շնորհիվ՝ Ադրբեջանի Լենինյան Կոմսոմոլը յուր 2-րդ կոնֆերանսին է հասել աճած, համախմբված յեվ միասնական շարքերով: Իր գործնական աշխատանքերի ժամանակ Ադրբեջանի Լենկոմյերիտմիությունը յելել է 14-րդ կուսհամագումարի յեվ Համամիութենական Լենկոմյերիտմիության 7-րդ համագումարի որոշումները կատարելու անհրաժեշտությունից: Ադրբեջանի Լենինյան Կոմսոմոլը մինչեվ իր հերթական 2-րդ կոնֆերանսը հետեվյալ կարեվորագույն նվաճումներն է ունեցել.—միութենական աշխատանքի բովանդակությունը մոտեցրվել է պրոլետարական յեվ գյուղացիական յերիտասարդության իրական կարիքներին. միության մեջ պրոլետարական ղեկավարությունը ամրապնդվել է. ինտերնացիոնալիստական—դաստիարակչական աշխատանքը բարելավվել է. ակտիվի կադրերը լայնացել յեվ որակով բարելավվել են յեվ, վերջապես, կոմսոմոլի ազդեցությունը աշխատավոր յերիտասարդության մասսաներում ուժեղացել է:

Սակայն կոնֆերանսը իր պարտքն է համարում կուսակցության առջեվ հայտարարելու, որ Ադրկոմկուսի

6-րդ համագումարի յեվ 14-րդ կուսհամագումարի առջեվ դրված խնդիրը դեռ լիովին կատարված չէ: Մեր աշխատանքի բովանդակության յեվ յերիտասարդական մասսաների կարիքների միջեվ յեղած անհամապատասխանությունը դեռ չի վերացված: Մեր կոնֆերանսի անելիքն է ընդհանրացնել 14-րդ կուսհամագումարի յեվ միության 7-րդ համագումարի վորոշումները կատարելու համար մեր կազմակերպության ունեցած փորձերը յեվ դրա հիման վրա կոնկրետ միջոցներ մշակել այդ համագումարների վորոշումները իրականացնելու համար: Ընդգծելով, վոր յերիտասարդությանը ինտերնացիոնալ վոգով դաստիարակելու գործում անկասկած հաջողություններ կան, կոնֆերանսը հաստատում է, վոր թե իր աշխատանքների յեվ թե միության հետագա գործնական աշխատանքների ժամանակ յերիտասարդության ինտերնացիոնալիստական դաստիարակությանը արժանի ուշադրություն կդարձնի:

Նացիոնալիստական, մանր-բուրժուական կուսակցություններ ներկա մոմենտում մեր կուսակցության դեմ մղվող իրենց պայքարի մեջ աշխատում են ոգտագործել յերիտասարդության վրա գաղափարական ազդեցություն ունենալու բոլոր հնարավորությունները: Կոնֆերանսը հայտարարում է, վոր յերիտասարդության շարքերը նացիոնալիստական տրամադրություններ մտցնելու բոլոր փորձերին Լենինյան Կոմսոմոլը արժանի գաղափարական հակահարված կտա:

Ներկայումս, առաջվա նման Ադրբեջանի Լենինյան Կոմսոմոլի ամենագլխավոր անելիքն է—բոլշեվիկորեն դաստիարակել բանվոր յեվ գյուղացի յերիտասարդության լայն մասսաներին, նրանց ավելի մեծ չափերով քաշել յերկրի տնտեսական կյանքի մեջ, մասնակցել պետական միջոցները խնայելու յեվ յերկիրը ինդուստրիացման յենթարկելու պայքարին, հանուն սոցիալիստական շինարարության:

Ադրբեջանի Կոմկուսը իր հետեվից տանելով աշխատավորների լայն մասսաներին, յեղել է, ներկայումս կա յեվ կլինի բոլշեվիկյան գվարդիայի անխախտ զորամասը. նրա փորձառության յեվ սովորույթների վրա դաս-



տիարակվում է Լենինյան Կոմսոմոլը, Ադրբեջանի պրոլետարիատի յեվ գյուղացիության յերիտասարդ սերունդը:

Ադրբեջանի աշխատավոր յերիտասարդությունը Լենինյան Կոմսոմոլի դրոշի տակ յեվ Լենինի կուսակցության ղեկավարությամբ, իրենից դաստիարակում է նոր կյանքի լավագույն կառուցողներ, բոլշեվիկ—ինտերնացիոնալիստներ:

*ԿԵՑՑԵ՛ ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՄՈՒՆԻՍՏԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ։*

*ԿԵՑՑԵ՛ ՆՐԱ ՂԵԿԱՎԱՐԸ—ԱԴՐԲԵՋԱՆԻ ԿՈՄԿՈՒՍԻ (բ) ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԿՈՄԻՏԵՆ։*

# ԲԱՆԱՁԵՎ

## Ընկ. ընկ. Միրզոյանի յեվ Կարայեվի զեկուցման առթիվ, միջազգային յեվ ներքին դրության մասին

Ադրբեջանի Լենինյան Կոմսոմոլի 2-րդ կոնֆերանսը Բագվի կազմակերպության ակտիվի հետ միասին լսելով ընկ. Կարաևի և Միրզոյանի զեկուցումը միջազգային և ներքին դրության մասին, վողջունում ե Չինաստանի պրոլետարիատի հերոսական, ազգային—ազատագրական պայքարը, նախատինքի սյունին գամելով Չան-Կայ-Շիի դավաճանությունը, վոր ծախվել ե՝ ծառայելու միջազգային իմպերիալիզմին և չինական բուրժուազիային։ Այժմ, սակայն, թե Չան-Կայ-Շիի դավաճանությունը, թե միջազգային բուրժուազիայի արարքները և թե Չինաստանի ռեակցիոն ուժերի հարձակողական մտադրությունները այլևս չեն կարող կանգնեցնել չինական աշխատավոր մասսաների ծավալվող հեղափոխական—ազատագրական պայքարի ընթացքը։

Չնայած վոր մեր լիազոր ներկայացուցչությունների վրա հարձակվելու, կեղծ դոկումենտներ պատրաստելու և այլ միջոցներով փորձում են պրովակացիայի յենթարկել Խորհրդային Միությունը, բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը բոլոր աշխատավորների հետ միասին հավատացնում ե չին պրոլետարիատին, վոր անկեղծորեն համակրում ե նրա պայքարը, վորի վերջը միայն հաղթանակը կլինի։

Կոնֆերանսը գտնելով, վոր Բագվի կազմակերպության շեֆությունը Նանկինի Կոմսոմոլի վրա՝ ամբողջ Ադրլենկոմյերիտմիության գործն ե, հանձնարարում ե Կենտրոնական Կոմիտեին՝ մշակել Չինական Կոմսոմոլի հետ Ադրբեջանի Կոմսոմոլի կապի և Ադրբեջանի Կոմսոմոլի կողմից նրա աշխատանքներին ոգնություն հասցնելու հարցը։

Միջազգային բուրժուազիան և լակեյություն անող սոցիալ-դեմոկրատիան մտադիր եին Ժընևի տընտեսական կոնֆերանսում լուծել տնտեսական և քաղաքական հակասությունների հանգույցը. բայց այդ մտադրությունը շատացնում ե հակասությունները, ուժեղացնում ե կապիտալիստական աշխարհի սպառազինումը, մարդկությանը տանում ե մի նոր ու հսկայական կործանիչ պատերազմի, նոր պատերազմական պատրաստություններ տեսնում աշխարհի վրա խորհուրդների միակ պետության դեմ։

Ներկայումս առաջվա նման բանվորա-գյուղացիական յերիտասարդության և ամենից առաջ Կոմսոմոլի գլխավոր խնդիրն ե ամրապնդել Խորհրդային Միության ռազմական ուժը։

Կոնֆերանսը հանձնարարում ե Կենտրոնական Կոմիտեին՝ միջոցներ ձեռք առնել զարգացնելու և խրախուսելու հրացանաձգության մարզանքը, ուժեղացնելու զինվորական պրոպագանդան յերիտասարդության շարքերում։ Կոնֆերանսը դրա հետ միասին հավատացնում ե կուսակցությանը, վոր յեթե դրությունը պահանջի, ապա բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը պատրաստ ե Խորհրդային Միության պաշտպանության համար խոփն ու մուրճը փոխել հրացանի, ստեղծագործող—շինարար կյանքը և աշխատանքը փոխել զինվորական լագերների կյանքի և աշխատանքի։

Ներկա պայմաններում Լենինյան Կոմսոմոլի ամենակարևոր անելիքը կայանում ե գլխավորապես նրանում, վորպեսզի կուսակցության ղեկավարությամբ բանվոր դասակարգի և գյուղացիության յերիտասարդ սերնդի լայն խավերին գիտակցորեն մասնակից անի սոցիալիստական շինարարությանը, այդ բանը մոտիկ

*ու հասկանալի դարձնելով բոլոր յերիտասարդ բանվորների և գյուղացիների համար։ Արտադրությունը ռացիոնալիզացիայի յենթարկելու, գները իջեցնելու և ապրանքների վորակը բարձրացնելու պայքարի մեջ, յերկիրը ինդուստրիացման և գյուղական տնտեսությունը կոոպերացման ու կոլեկտիվացման յենթարկելու համար մղվող պայքարի մեջ բանվորա-գյուղացիական յերիտասարդությունը պետք է և կլինի առաջին շարքերում։*

Կեցցե՛ Համամիութենական Կոմունիստական Կուսակցությունը—մեր յերկրում սոցիալիզմի հաղթական կառուցման կազմակերպիչը։

Կեցցե՛ համաշխարհային հեղափոխության շտաբը Կոմինտերնը։

Կեցցե՛ չինական ազգային—ազատագրական հեղափոխությունը։



# ԲԱՆԱՁԵՎ

## Ադրբեջանի Լենկոմյերիտմիության Կենտրոնական Կոմիտեյի զեկուցման առթիվ (ընդունված 2-րդ կոնֆերանսում ընկ. Ախունդ-Զադեի զեկուցման շուրջը)

*Համաադրբեջանյան 2-րդ կոնֆերանսը մատնանշում է, վոր անկասկած Ադրլենկոմյերիտմիությունը քաղաքականապես աճել է, կուսակցական տրամադրությունները ամրապնդվել են, կուսակցության դերը ճիշտ է հասկացվել. դրա հիման վրա Ադրլենկոմյերիտմիությունը ներկուսակցական պայքարի ժամանակ առանց տատանումների լենինյան ճիշտ ուղի է բռնել, բոլշևիկյան կուսակցության ղեկավարությամբ պահպանելով միության շարքերի լիակատար միանականությունը։ Համաադրբեջանյան 2-րդ կոնֆերանսը ամբողջովին միանում է 15-րդ կուսկոնֆերանսի բոլոր վորոշումներին և հարկավոր է գտնում շարունակել և ծավալել Ադրլենկոմյերիտմիության մեջ Վեկապեի (բ) 15-րդ կուսկոնֆերանսի և 14-րդ համագումարի վորոշումների պարզաբանումը. կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում, վոր լուրջ ուշադրություն դարձնվի խորը ուսումնասիրելու և յուրացնելու կուսակցության բոլոր հիմնական վորոշումները և ուսումնասիրելու ոպպոզիցիայի սխալները։*

*2. Անցած տարին ամբողջ միության և Ադրլենկոմյերիտմիության աշխատանքների մեջ բեկման տարի է յեղել։ Չնայած շրջապատող պայմանների մի շարք դժվարություններին և հակասություններին, Ադրլենկոմյերիտմիությունը, ճիշտ է, դանդաղ, բայց հաս-*

տատուն կերպով սկսել է գործնականորեն իրականացնել ՎԵԿԱՊԵ-ի (բ) 14-րդ համագումարի վորոշումները. դրա շնորհիվ ել միությունը իր 2-րդ կոնֆերանսին մեծ նվաճումներ է ձեռք բերել իր աշխատանքները յերիտասարդության մասսաների աճող բազմատեսակ կարիքներին հարմարեցնելու գործում, կապելով այդ կարիքները յերկրի սոցիալիստական շինարարության խնդիրների հետ:

3. Միությունը հետևյալ հիմնական նվաճումներն է ունեցել. արտադրության մեջ բանվոր յերիտասարդության դրությունը ամրացել է, վոր արտահայտվում է հետևյալ կերպ, —բանվոր յերիտասարդության թիվը ավելացել է ու աշխատավարձը բարձրացել, բանվոր յերիտասարդության դպրոցների և բրիգադների ցանցը լայնացել է, փաբրզավուչի դպրոցների աշակերտների թիվը աճել է, փաբրզավուչի դպրոցների աշխատանքը վորոշ չափով լավացել է, 4000-ից ավել պատանիներ և յերեխաներ բժշկական քննության են յենթարկվել, բատրակ յերիտասարդության տնտեսական դրությունը լավացել է (բատրակ յերիտասարդների 60 տոկոսը տերերի հետ պայմանագրեր ունեն կապած): Վերջին ժամանակներս միության ամբողջ աշխատանքի մեջ կուլտուրական-տնտեսական գծով կենդանացում է սկսվել: Զգալի չափով լավացել է կոմսոմոլի մասնակցությունը արտադրության մեջ (պայքար պրոգուլների դեմ, դիսցիպլինայի բարձրացում արտադրության մեջ), դրա հետևանքով աշխատանքի հետևյալ մի շարք նոր ձևեր են առաջ քաշվել—մրցանակ արտադրության մեջ ամենալավ աշխատողի համար, տեխնիքական խմբակներ և այլն: Գյուղում հասարակական ոգտակար աշխատանքը ուժեղացել է (ոգնություն դպրոցին, քյահրիզներ անցկացնելը, կամուրջների նորոգումներ և այլն): Բջիջները կուսակցության ոգնությամբ հսկայական աշխատանքի են ձեռնարկում գյուղական տնտեսությունը կոոպերացման սկզբունքներով վերակառուցելու համար (գյուղատնտեսական խմբակներ, կոլեկտիվ վարուցանքսի



կազմակերպում, տրակտորներ ձեռք բերելը): Մասսայական կուլտուրական-լուսավորական աշխատանքը ուժեղացել է, տարվելով յերիտասարդության մասսաների կարիքների համապատասխան (լավ գարմոնիստի մրցանակ, տուրիզմ, ինքնագործունեության յերեկոներ, եքսկուրսիաներ. գյուղերում, —խրճիթ-ընթերցարանների աշխուժացում, յերեկոների և լիկկայանների կազմակերպում և այլն): Ինչպես քաղաքում, այնպես ել գյուղում մի շարք նվաճումներ կան բյուրոկրատիզմի դեմ կռվելու և պետական—տնտեսական ապպարատը ռացիոնալիզացիայի յենթարկելու գործում կուսակցությանը ոգնելու համար: Միության ամբողջ աշխատանքի մեջ մի շարք հաջողություններ են ձեռք բերվել ներմիութենական դեմոկրատիան ծավալելու համար. այդ բանը հնարավորություն է տվել բանվոր և գյուղացի յերիտասարդության շարքերից ակտիվի նոր կադրեր առաջ քաշելու:

4. Այդ նվաճումների հետ միասին աճել է նաև բանվոր և գյուղացի յերիտասարդության հասարակական քաղաքական ակտիվությունը. դրանով յերիտասարդությունը հսկայական հետաքրքրություն է ցույց տալիս յերկրի քաղաքական և տնտեսական հարցերին, մասնավորապես կուսակցության և միության կյանքի նկատմամբ: Խորհուրդների վերընտրությունների ժամանակ կոմսոմոլի մասնակցության արդյունքները պարզել են, վոր յերիտասարդությունը մեծ ակտիվություն է ցույց տվել, կոմսոմոլի հեղինակությունը գյուղացիության մեջ մեծացել է. գյուղական կազմակերպությունները ճիշտ են հասկացել կուսակցության քաղաքականությունը գյուղում. այդ բոլորի շնորհիվ ել խորհուրդներում կոմսոմոլիստների թիվը 2,8 տոկոսով ավելացել է:

Գյուղական յերիտասարդության մասսաների հասարակական քաղաքական ակտիվության աճման հետ միասին ել ավելի շատ ամրապնդվել է պրոլետարական ղեկավարությունը. դա նույնպես յերևում է նրանից, վոր բանվոր յերիտասարդության քաղաքական

ակտիվության աճումը ընթանում է ավելի ուժեղ թափով. դրա ամենալավ ապացույցն այն է, վոր պրոլետարական մեծ կորիզ ունեցող կազմակերպությունները մոտիկ մասնակցություն են ցույց տվել յերկրի հասարակական և քաղաքական կյանքի բոլոր հիմնական հարցերում։ Այդ բոլորը կատարվել է Ադրլենկոմյերիտմիության վերցրած ուղիղ գծի շնորհիվ։ Այդ հաջողությունները Ադրլենկոմյերիտմիության առջև խընդիր են դնում՝ գյուղական կազմակերպությունները ամեն կերպ քաշել ու մոտեցնել հասարակական-տնտեսական կյանքի գլխավոր հարցերին, միաժամանակ հետագայում ուժեղացնելով հասարակական-քաղաքական աշխատանքները պրոլետարական կենտրոններում (Բագու, Գյանջա)։

5. Սակայն նվաճումների և բանվորա-գյուղացիական յերիտասարդության հասարակական-քաղաքական ակտիվության աճման կողքին բանվոր յերիտասարդության առանձին չնչին շերտերում կան մի շարք հիվանդոտ յերևույթներ,—այն է՝ սպեցակերություն, մեր արդյունաբերության բնույթը չհասկանալը, պետության հնարավորությունները չհասկանալը, սոցիալիստական շինարարության դժվարությունների առջև վորոշ չափով գլուխ կորցնելը և այլն։ Գյուղացիական յերիտասարդության մեջ նկատվում է—խանդ դեպի քաղաքը և ձգտում՝ սեփական տնտեսությունը բարձրացնելու աշխատանքի շրջանակների մեջ պարփակվել։ Դպրոցական յերիտասարդության մեջ նկատվում է ընկած բնավորություն, նացիոնալիզմի տրամադրություն, վոր յերբեմն մտնում են նաև կոմսոմոլի մեջ։ Այդ տրամադրությունների պատճառները առաջանում են ՆԷՊ-ի հակասություններից և մեր յերկրի սոցիալիստական զարգացման դժվարություններից։ Նման տրամադրություններ առաջանում են նաև նրանից, վոր վերջին ժամանակներս արտադրության մեջ բանվոր յերիտասարդության կազմը փոխվել է. արտադրության մեջ է մտել յերիտասարդության մի մեծ թիվ, վորը գործազրկության աճման պատ-



ճառով դեռ չի ամրացել այնտեղ։ Յերիտասարդության կուլտուրական կարիքները դեռ թույլ են բավարարվում, հատկապես գյուղերում. հաճախ այդ տրամադրությունները առաջանում են նրանից, վոր յերիտասարդությունը դեռ այնքան ել բավարար չափով չե նյութապես ապահովված (բնակարանային պայմաններ և այլն)։

6. Պրոլետարիատի դասակարգային թշնամիները—մուսավաթիստները, իտտիհադիստները, դաշնակները, կուլակները, մոլլաները աշխատում են ոգտագործել այդ տրամադրությունները և յերիտասարդության առանձին, ճիշտ է չնչին շերտերի մեջ գոյություն ունեցող անբավականությունները (նախ և առաջ աշակերտության մեջ) ուղղել կուսակցության ու Խորհրդային իշխանության դեմ։ Ադրլենկոմյերիտմիության անելիքը կայանում է նրանում, վորպեսզի ավելի ուշադրությամբ հաշվի առնի այդ տրամադրությունները, գործնական միջոցների ոգնությամբ աշխատի, համաձայն պետության նյութական միջոցներին, հետագայում աստիճանաբար լավացնել բանվորա-գյուղացիական յերիտասարդության նյութական դրությունը, անհաշտ կերպով պայքարելով գաղափարական ֆրոնտում, վճռական հարված տալով այդ հիվանդոտ հակապրոլետարական տրամադրություններին։

7. Դրա հետ միասին Ադրլենկոմյերիտմիության աշխատանքների մեջ կան նաև ուրիշ շատ թերություններ։ Աշխատանքի նոր ձևերը և մեթոդները դեռ շատ բջիջներ չեն յուրացրել։ Աշխատանքը նոր ձևերի համաձայն դեռ բավարար սիստեմատիկ կերպով չե կազմակերպված, հատկապես գյուղում։ Կոմսոմոլի ակտիվը, իր վորոշ մասերում դեռ անհրաժեշտ կվալիֆիկացիա չունենալով, վոչ միշտ է կարողանում կատարել միության բարդացած խնդիրները։ Այդ բոլորի հետևանքով էլ փոփոխական կազմը միության մեջ, վոր թեպետ բավականին կրճատվել է, բայց և այնպես դեռ վերջ չի ստացել։ Մասսաների կարիքների և մեր աշխա-

տանքի բովանդակության անհամապատասխանությունը դեռ չի վերացվել և մնում է, վորպես մեր կազմակերպության կենտրոնական հարցը։

Վորպես հետևանք, կոնֆերանսը Ադրլենկոմյերիտմիության առջև հետևյալ խնդիրներն է դնում.—

1. Ադրլենկոմյերիտմիության կարևորագույն խնդիրն է միության լայն մասսաներին մասնակից անել մեր արդյունաբերության ռացիոնալիզացիան անց կացնելու համար։ Անհրաժեշտ է, վոր կազմակերպությունը պարզի իր համար սոցիալիստական ռացիոնալիզացիայի նշանակությունը, եյությունը և դըժվարությունները. ամեն կերպ այնպես պետք անել՝ վորպեսզի յերիտասարդության հետամնաց խմբերը վերացնեն ռացիոնալիզացիայի նշանակությունը չհասկանալը։ Հարկավոր է մոտ ապագայում ի մի համախմբել նավթային արդյունաբերության ռացիոնալիզացիայի մեջ Բաքվի կազմակերպության մասնակցության փորձերը, այդ փորձերը հետագա աշխատանքների մեջ օգտագործելու համար։ Անհրաժեշտ է հետագայում ուժեղ աշխատանք տանել աշխատանքի արտադրողականությունը բարձրացնելու համար, ուժեղացնել պայքարը պրոգուլների դեմ, պայքարել արտադրության մեջ դիսցիպլինան բարձրացնելու և տեխնիկան լավացնելու համար. պայքարել արդյունաբերության պատրաստած ապրանքների ինքնարժեքը իջեցնելու համար. այդ ուղղությամբ աշխատանքի գործադրվող նոր ձևերը ամեն կերպ խրախուսել, արտադրությունը լավացնելու բոլոր փորձերը հաղորդելով գործարանից գործարան, ռայոնից ռայոն, յերիտասարդության առանձին խմբերից մյուս խմբերին։ Ավելի յեռանդուն կերպով հարկավոր է կոմսոմոլիստներին մասնակից անել արտադրական խորհրդակցություններին, այդ խորհրդակցություններում քննության համար առաջ քաշելով յերիտասարդության աշխատանքի և կրթության հարցերը։ Միության բջիջները շուտ-շուտ պետք լսեն վարպետների և ադմինիստրացիայի զեկուցումները. բջիջները պետք խըրախուսեն հնարագիտությունների աշխատանքը յերի-



տասարդության մեջ։ Արտադրության մեջ միության բջիջները և կոմսոմոլիստները պետք սերտ գործնական աշխատակցություն հաստատեն մասնագետների հետ։

2. Գյուղական կազմակերպությունների աշխատանքի մի գլխավոր մասը պետք կազմի այն հարցը, վոր Կոմսոմոլը մասնակցի գյուղական տնտեսությունը և կոոպերացիան բարձրացնելու գործին։ Գլխավոր խնդիրն է գյուղացի—կոմսոմոլիստներից կուլտուրական հասարակական գործիչներ, կոոպերատորներ պատրաստել։ Այդ նպատակին հասնելու համար գյուղական բջիջները պետք քննության առնեն գյուղական տնտեսության կոնկրետ հարցերը. Կոմսոմոլի կոմիտեներին կից հաճախ պետք հատուկ խորհրդակցություններ հրավիրել, վորտեղ պետք քննել գյուղական տըտեսության մեջ Կոմսոմոլի կողմից մասնակցություն ցույց տալու կոնկրետ հարցերը. պետք է կանոնավորել սերտ կապը ուսուցչության և գյուղատնտեսների հետ, նրանց օգտագործելով միության ագրոպրոպագանդիստական աշխատանքների համար։ Անհրաժեշտ է ամեն կերպ օգնել գյուղացի յերիտասարդությանը՝ գյուղական տնտեսությունը լավացնելու գործում, վորպեսզի տնտեսության կուլտուրականությունը բարձրացնելու միջոցով ավելանա նրա յեկամուտը. այդ ճանապարհով կկանոնավորվի գյուղացի յերիտասարդության նյութական դրությունը և միջոցներ կստեղծվեն գյուղը սոցիալիստորեն վերափոխելու խնդիրները աստիճանաբար գործադրելու համար։

3. Համամիութենական Լենկոմյերիտմիության 5-րդ կոնֆերանսի վորոշումների հիման վրա հարկավոր է գործնական միջոցներ մշակել բրոնի մասին և ավելի շատ ուշադրություն դարձնել գործազրկության դեմ կռվելու վրա, հետևյալ ճանապարհներով.—

ա) յերիտասարդներին աշխատելու համար գործարաններն ուղարկել բրոնի հաշվից դուրս, սոցիալական ապահովագրության տեղական օրգաններից տըրվող դրամական միջոցների չափը շատացնել, ամեն

կերպ աշխատել յերիտասարդությանը բոնից ինքնուրույն աշխատանքի գնելու համար, ամրացնելով նրանց արտադրությանը.

բ) ամեն կերպ ավելացնել արտելներ և արհեստանոցներ կազմակերպելու համար պետական օրգաններից տրվող դրամական միջոցները և ըստ հնարավորության յերիտասարդությունից աշխատանքային կոլեկտիվներ ստեղծել. բանվոր ձեռքեր վարձելու գործը անպայման անցկացնել աշխատանքի բորսայի միջոցով, աշխատանքի ժողկոմատի օրգաններին ամեն տեսակի աջակցություն ցույց տալ պրոտեկցիոնիզմի և խնամեության դեմ կռվելու համար։ Ամեն կերպ ուժեղացնել եկոնոմաշխատանքը բատրակ յերիտասարդության մեջ, ավելի մեծ չափերով աշխատանքային պայմանագրեր կնքելով, պայքարելով գաղտնի շահագործման դեմ, դրա հետ միասին աշխուժացնելով եկոնոմկոմիսսիաների աշխատանքը և մասնակցելով Հողանտառի միության աշխատանքներին։

4. Հատուկ տեղ պիտի տալ բանվորա-գյուղացիական յերիտասարդության մեջ հանրակրթական աշխատանքը բարձրացնելուն. դրա համար պիտի պրոֆտեխնիքական դպրոցների, հանրակրթական կուրսերի ցանցը լայնացնել քաղաքում և կարճատև կուրսերի ցանցը գյուղում (տրակտորիստների, կոոպերատիվ կուրսեր և այլն). գյուղում պիտի տեխնիքական և ագրոնոմիական կուրսերի ցանցը ևս ծավալել։ Անհրաժեշտ է միջոցներ ձեռք առնել կրթության բոլոր ձևերը, մասնավորապես ֆաբզավուչի դպրոցների աշխատանքը համմարեցնելու արտադրության կարիքներին. մշակել տեքստիլ արդյունաբերության համար վորակյալ ուժեր պատրաստելու հարցը. ամրապնդել Գյուղացիական Յերիտասարդության Դպրոցները և աշխատել նրանց ցանցը լայնացնել։ Դրա հետ միասին հետագայում անհրաժեշտ է առաջ շարժել I և II աստիճանի դպրոցներին արտադրական և գյուղատնտեսական թեքում տալու հարցը. ավելի արագ կերպով կոմսոմոլիստներին անցկացնել բարձրագույն դպրոց-



ները, պոլիտեխնիկումները. ուժանդակ կրուժոկ—կուրսեր բանալով այն կոմսոմոլիստների համար, վորոնք մտնում են բարձրագույն դպրոցները։ Կոնֆերանսը հանձնարարում է Կենտրոնական Կոմիտեին, պետության ուժերի և միջոցների համաձայն համապատասխան օրգանների առաջ հարց բարձրացնել Գյուղացիական Յերիտասարդության Դպրոցները, I աստիճանի դպրոցները, լիկկայանները լայնացնելու անհրաժեշտության մասին. մեծ ուշադրություն պիտի դարձնել քաղլուսվարի կուլտուրական հիմնարկներին (ակումբներ և այլն), վորոնք լուսավորության օրգանների աշխատանքի ամենաթույլ կողմերից մեկն են։

5. Կարևորագույն խնդիր է բյուրոկրատիզմի դեմ կռվելու, պետական և տնտեսական ապպարատը ռացիոնալիզացիայի յենթարկելու և գները իջեցնելու համար մղվող պայքարում կուսակցությանը օգնություն հասցնելու հարցը։ Միաժամանակ առևտրական և խորհրդային հիմնարկությունների կից կոմսոմոլիստական բջիջները պիտի ուժեղացնեն իրենց ուշադրությունը։ Անհրաժեշտ է Կենտրոնական Կոմիտեի, Բագվի Կոմիտեի, գավկոմների և ռայկոմների կից հաճախակի խորհրդակցություններ հրավիրել պետական ապպարատի ռացիոնալիզացիայի համար և կոոպերատիվ ու խորհրդային օրգաններում կատարվող վատնումների դեմ տարվող պայքարում Կոմսոմոլի մասնակցության կոնկրետ հարցեր քննելու համար։ Լայն կերպով պիտի պարզաբանել կուսակցության վորոշումները բյուրոկրատիզմի դեմ պայքարելու մասին։ Միաժամանակ պահանջվում է, վոր Կոմսոմոլի ներկայացուցիչները կազմակերպված մասնակցություն ցույց տան խորհրդային և կոոպերատիվ օրգաններում։

6. Կոմսոմոլի զարգացման ներկա պայմաններում մասսայական կուլտուրական աշխատանքը ծավալելու խնդիրը մեծ ուշադրություն է պահանջում։ Անհրաժեշտ է ամեն կերպ վերացնել կուլտուրական աշխատանքը թերագնահատելու տրամադրությունները, վոր ունեն առանձին կոմսոմոլիստներ, այդ տրամադրու-

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ անվան Публичная Библиотека

թյունն առաջանում են նրանից, վոր չեն հասկանում, թե ներկայումս յերիտասարդության քաղաքական դաստիարակությունը չի կարող տարվել առանց կապակցելու ամբողջ կուլտուրական, տնտեսական հոգսերի հետ։ Կուլտուրական-կենցաղային աշխատանքը պիտի սերտ կապված լինի արտադրական կյանքի հետ, կուլտուրականության և քաղաքականության միջև կապի մասին 14-րդ կուսհամագումարի վորոշումները հետևողական կերպով կյանքի մեջ մտցնելու միջոցով։ Հիմնական խնդիրը կայանում է նրանում, վորպեսզի յերիտասարդության կողմից իր կուլտուր-տնտեսական շահերին վերաբերող մանր հարցերի նկատմամբ ցույց տրվող հետաքրքրությունն անցնի ավելի բարդ կուլտուրական-կենցաղային հարցերի։ Կուլտուրական աշխատանքի մեջ ամենաթույլ տեղը բռնում է ֆիզկուլտուրան։ Կոնֆերանսը անհրաժեշտ է համարում ֆիզկուլտուրան յեռանդուն կերպով զարգացնել միության մեջ, մանավանդ գյուղում։ Անհրաժեշտ է աշխուժացնել Ֆիզկուլտուրայի Համադրբեջանյան Խորհրդի և նրա տեղական խորհուրդների աշխատանքը ու այդ աշխատանքի համար համապատասխան նյութական պայմաններ ստեղծել։

7. Չնայած այս տարի քաղուսմունքի աշխատանքի մեջ ունեցած մի շարք նվաճումներին, ընթացիկ տարում դեռ մի շարք թերություններ են պարզվել (մեթոդական ղեկավարության թուլությունը, քաղուսմունքի գրականության պակաս մատակարարումը և ղեկավարության թուլությունը, մանավանդ գյուղում)։ Հարկավոր է այնպես անել, վոր յուրաքանչյուր կոմսոմոլիստ պարզի իրեն համար քաղաքական լուսավորությունը պարտադիր կերպով անցնելու նշանակությունը, ժամանակին պատրաստվել քաղուսմունքի տարվան, հատկապես ժամանակին գրականություն հրատարակելու և ղեկավարների կազմը վերապատրաստելու համար։ Դրա հետ միասին հարկավոր է քննել քաղուսմունքի ձևերի և քաղաքական կրթության տեսակները կամավոր կերպով ընտրելու հնարավորու-



թյան հարցը (Համամիութենական 5-րդ կոնֆերանսի վորոշումներից). քննության պիտի առնել ծրագիրը կուսակցության ընթացիկ խնդիրների և յերիտասարդությանը հետաքրքրող առորյա հարցերի հետ կապելու հարցը։

8. Ընդգծելով, վոր Ադրբեջանի աշխատավոր յերիտասարդության լայն խավերի մեջ ինտերնացիոնալ դաստիարակությունը խորացնելու գործը անկասկած հաջողություններ է ունեցել և մատնանշելով ազգայնական տրամադրությունների գոյությունը յերիտասարդության վորոշ խավերի, մանավանդ աշակերտության մեջ, կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում հետագայում ևս մաքսիմալ չափերով խորացնել ինտերնացիոնալիստական դաստիարակությունը։ Նացիոնալիստորեն և հակահեղափոխականորեն տրամադրված տարրերը (մուսավաթիստները, իտտիհադիստները, դաշնակները և ուրիշները) աշխատում են յերիտասարդության վրա գաղափարականորեն ազդեցություն գործադրելու բոլոր հնարավորությունները ոգտագործել։ Վերջին ժամանակներս յերիտասարդության վրա ազդեցություն ունենալու համար պայքարը վորոշ չափով սրվել է։ Ադրլենկոմյերիտմիությունը մանրամասնորեն հաշվի պիտի յենթարկի բոլոր ազգությունների կարիքները, ամեն կերպ բավարարելով յերիտասարդության առողջ կուլտուրական-կենցաղային կարիքները, ամեն կերպ պայքարելով բանվորա-գյուղացիական յերիտասարդության շարքերը նացիոնալիստական, շովինիստական տրամադրություններ մտնելու դեմ։ Անհրաժեշտ է.—ա) խորը կերպով ուսումնասիրել Լենինի ուսմունքը և կուսակցության հիմնական վորոշումները՝ ազգային հարցի վերաբերմամբ. բ) պարզաբանել նացիոնալիզացիայի եյությունը և յերիտասարդությանը ծանոթացնել այդ գործում ունեցած նվաճումների հետ, պայքարելով նացիոնալիզացիայի աղավաղումների դեմ. գ) ուսումնասիրել Ադրբեջանի Կոմկուսի (բ) պատմությունը և նրա պայքարը մուսավաթիստների, իտտիհադիստների և դաշնակցության դեմ։

9. Դրա հետ միասին կոնֆերանսը անհրաժեշտ է համարում ուժեղացնել գաղափարախոսական աշխատանքը դպրոցական հիմնարկներում։ Նախ և առաջ միությունը պիտի ձգտի ապահովելու սոցիալական կազմը այդ դպրոցներում, յեռանդուն մասնակցություն ունենալով այդ դպրոցների համար սովորողներ հավաքելուն, հատկապես մանկավարժական դպրոցների համար։ Դպրոցական բջիջները պիտի զբաղվեն յերկրի զարգացման տնտեսական, կուլտուրական հարցերի քննությամբ։

10. Կոնֆերանսը ընդգծելով, վոր Կոմսոմոլի հակակրոնական աշխատանքը թուլացել է, միաժամանակ հոգևորականության ազդեցության վորոշ աճումն է մատնանշում։ Հաշվի առնելով անցած տարվա հակակրոնական աշխատանքի փորձը, անհրաժեշտ է ավելի կազմակերպված սիստեմատիկ աշխատանք սկսել, թույլ չտալով սխալներ, թեթևամիտ վերաբերմունք չունենալով հակակրոնական պրոպագանդայի մեթոդների նկատմամբ, ուշադրություն դարձնելով դասախարակչական աշխատանքը ուժեղացնելուն, բնագիտական գիտելիքներ տարածելու միջոցով (բնական-գիտական կրուժոկներ և այլն)։ Անհրաժեշտ համարել հակակրոնական հարցերի առթիվ համապատասխան գրականության հրատարակելը։

11. Միության իդեոլոգիական աշխատանքը զարգացնելու պայմաններում, Կոմսոմոլի տպագիր գործը կոմսոմոլիստների մասսայի ու ակտիվի կողմից ավելի լուրջ ուշադրություն և ոգնություն է պահանջում։ Կոնֆերանսը հավանություն է տալիս, վոր Կենտրոնական Կոմիտեն հրատարակում է «Կոմսոմոլ» և «Պիոներ», ժուռնալները, արտաքուստ և ներքուստ լավացրել է թերթերի աշխատանքը. կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում, վոր տեղական փորձի դրական և բացասական կողմերը ավելի մեծ չափերով լուսաբանվեն թերթերում և ժուռնալներում, վորպեսզի մամուլի միջոցով հնարավոր լինի Բագվի կազմակերպության աշխատանքի և փորձի նոր ձևերը տարածել Ադրլենկոմյերիտմիության մեջ։



12. Միության բարդացած խնդիրների և նրա շարքերում մեծ թվով գյուղացիական յերիտասարդության գտնվելու պատճառով պետք է ամրապնդել պրոլետարական ղեկավարությունը և ավելի համախմբել միության կորիզը։ Անհրաժեշտ է ընկերական նամակների միջոցով ռայոնական կազմակերպությունների ակտիվի կապը գավառականի, առանձին բջիջների և կոմսոմոլիստների կապը իրար հետ լայնացնել. դրա համար պիտի ոգտագործել տուրիզմի ուժեղացող աշխատանքները, շեֆբջիջները հաճախելու նպատակով և այլն։ Միաժամանակ շարունակել գավառներն ուղարկելու ամենալավ, տոկուն կոմսոմոլիստ-գործիչներ։

13. Ներկայումս հատկապես կարևոր նշանակություն է ստանում միության աճումը կանոնավորելու հարցը։ Կոնֆերանսը առաջարկում է հետագայում վոչ մի դեպքում թույլ չտալ, վոր միության բանվորական—բատրակային կորիզը իջնի. ամեն կերպ պիտի աշխատել, վոր այդ կորիզը մեծանա անկուսակցական բանվոր-բատրակային յերիտասարդության մեջ աշխատանքը ուժեղացնելու միջոցով (դռնբաց ժողովներ, անհատական ագիտացիա և այլն). միջոցներ պիտի ձեռք առնել միության աճումը գյուղում դանդաղեցնելու համար. պիտի սահմանափակել նաև ծառայողների և ինտելլիգենտների ընդունելությունը։ Հիմնական նշանակություն ունի Բագվի կազմակերպության պրոլետարական կորիզի աճումը. դա մի յերաշխիք է Ադրլենկոմյերիտմիության աճումը ուղիղ կերպով կանոնավորելու համար։ Կոնֆերանսը գյուղական կազմակերպությունների ուշադրությունն է հրավիրում, վորպեսզի ավելի ուշադիր վերաբերմունք ցույց տան միության մեջ նոր անդամներ ընդունելուն, խստիվ անհատական ընտրություն կատարել, ապահովել առաջին հերթին միության աճումը ի հաշիվ բատրակ և չքավոր յերիտասարդության, դրա հետ միասին միության շարքերը քաշելով միայն ամենալավ և աշխա-

տանքի մեջ ստուգված միջակ գյուղացի յերիտասարդներին։ Միության բջիջները ուշադրությամբ պիտի հետևեն, վորպեսզի կուլակ և չարչիական յերիտասարդությունը միության շարքերը չխցկվի։

14. Կոնֆերանսը անհրաժեշտ է համարում ուժեղացնել դաստիարակչական աշխատանքը աղջիկների մեջ և միության շարքերը գրավել նախ և առաջ բանվորուհիներին, բատրակուհիներին և միջակ աղջիկ—գեղջկուհիներին. այդ պիտի անել աղջիկ—տնտեսուհիների խորհրդակցությունների, աղջիկների կոնֆերանսներ, կուրսեր, հավաքույթներ հրավիրելու միջոցով և նրանց համար համապատասխան քանակությամբ տեղեր ապահովելով դպրոցներում ու ավելի ուժեղ կերպով գրավելով դեպի լիկկայանները։

15. Միության մեջ տարիքն անցկացրածների (переростков) մեծ թվի պատճառով միությունը պիտի զբաղվի նրանց հետագա հասարակական աշխատանքի և կուսակցության ու կոմսոմոլի ազդեցության տակ ամրապնդելու հարցով։ Կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում նրանցից ամենալավերին հանձնել կուսակցությանը, բոլոր տարիքն անցկացրած կոմսոմոլիստներին գրավելով գյուղի կուլտուրական-տնտեսական աշխատանքների զանազան ճյուղերի մեջ. կուսակցությունը չհանձնելու դեպքում նրանց չվանել Կոմսոմոլի բջիջներից և հասարակական աշխատանքներից։

16. Միության զարգացման այժմյան պայմանները, ավելի քան յերբեք, պահանջում են ունենալ ակտիվի բարձր վորակյալ կադր, վորը սերտ կապված մասսայի հետ, կարողանա կոնկրետ գործի շուրջը համախմբել յերիտասարդության մասսաների նախաձեռնությունը, ճիշտ կապակցի յուր աշխատանքները կուսակցության և բանվոր դասակարգի ընդհանուր խնդիրների հետ և սիստեմատիկորեն աշխատի յուր ինքնադաստիարակության վրա։ Դրա համար էլ անհրաժեշտ է անել հետևյալը. — ուշադրություն դարձնել ակտիվի սպեցիալիզացիայի վրա, ակտիվի կապը մասսայի հետ ամեն կերպ ուժեղացնել. ուշադրություն դարձ-



նել ինքնադաստիարակման գործին, խելացի կերպով ոգտագործել ակտիվի ժամանակը, վճռականապես պայքարելով իբր թե ամեն բան իմանալու, բյուրոկրատիզմի ելեմենտների, վերևից նայելու դեմ. ակտիվը այնպես պիտի դաստիարակել, վոր նա դառնա կայուն ու դիսցիպլինար և համառորեն ու մանրամասնորեն ուսումնասիրի կուսակցության վորոշումները և Լենինի ուսմունքը։ Դրա հետ միասին հարկավոր է ավելի վճռական կերպով ակտիվ առաջ քաշել բանվոր, բատրակ և չունևոր յերիտասարդության շարքերից, ակտիվի սիստեմատիկ տեղափոխություն վորոշել, ուղիղ կերպով բաժանել ուժերը և հանգուցային կետերը ավելի ամուր բանվորական ակտիվով ապահովել։

17. Կոնֆերանսը հատկապես կարևոր է համարում Ագրլենկոմյերիտմիության մեջ կուսակցական կորիզը ուժեղացնել, այդ կորիզը ավելի մեծ չափերով մասնակից դարձնել կուսակցական կյանքին, ուժեղացնելով կուսակցական կազմակերպությունների կոնտրոլը նրա վրա։ Անհրաժեշտ է կոմսոմոլիստներին ավելի մեծ չափերով մասնակից անել կուսակցական կյանքի հարցերը քննելուն և սովորելուն, ընդհանուր ժողովներում յերկրի հասարակական-քաղաքական կյանքի հիմնական և կոնկրետ հարցերը քննելու միջոցով (արտադրության, գյուղական տնտեսության, կոոպերացիայի դրությունը և այլն)։

18. Պիոներական կազմակերպությունը դեռ մեծ ուշադրություն է պահանջում։ Կոնֆերանսը հատուկ ուշադրություն է դարձնում ուժեղացնելու պիոներ-կազմակերպության նյութական դրությունը, նրան նյութական ոգնություն հասցնելու գործին և նրա աշխատանքներին մասնակից անելով լուսավորության ժողկոմատի որգաններին, պրոֆմիություններին և այլն։ Գավկոմները և ռայկոմները պարտավոր են ուշադրությամբ ուսումնասիրելու պիոներական կազմակերպություններում տեղի ունեցող պրոցեսները, բարձրացնելու դաստիարակչական աշխատանքը, հարմարեցնելով յերեխաների իսկական կարիքներին և

տարիքների առանձնահատկություններին, ավելի լուրջ վերաբերմունք ցույց տալով ղեկավարներ ջոկելուն։

19. Մեր յերկրի աճման հետ միասին Խորհրդային Միության դեմ պատերազմի վտանգը ավելի է ուժեղանում։ Ադրլենկոմյերիտմիության անելիքն է․— ամեն կերպ ուժեղացնել աշխատանքը Կարմիր Բանակում և Կարմիր Նավատորմում, ամրացնել Կոմսոմոլի կազմակերպությունների կապը Բանակի և Նավատորմի հետ, ուժեղացնել միության շարքերը ռազմականացման յենթարկելու աշխատանքը զինվորական—ծովային պրոպագանդայի, զինվորական—ծովային անկյունները, հրացանաձգության կրուժոկները զարգացնելու, ՈՍՈ-Ավիախիմի աշխատանքներին միության մասնակցության միջոցով, ավելի հաջող նախապատրաստություն կազմակերպելով զորակոչային կամպանիաների ժամանակ։



# Կոմսոմոլի մասնակցությունը գյուղական տնտեսությունը բարձրացման և գյուղի կոոպերացման գործում

(Ադրլենկոմյերիտմիության 2-րդ կոնֆերանսում ընկ. Նայդենովի և Մուստաֆաևի զեկուցումների թեզիսները).

1. Ներկա պայմաններում կուլակների դեմ մղվող պայքարում կոմսոմոլը կուսակցությանը պետք է օգնի պրոլետարիատի և չունևորների կապը միջակ գյուղացիության հետ ամրապնդելու, միջակին կուլակից կտրելու և կուլակին չեզոքացնելու համար («ՎԵԿԱՊԵ-ի (բ) 14-րդ համագումարի բանաձևից)։ Այդ աշխատանքը առաջիկա ամբողջ շրջանի համար միության ամենակարևոր խնդիրն է։ Այդ աշխատանքը կատարելու համար միությունը պետք է մասնակցի չքավորների և միջակների տնտեսությունը սոցիալիստական հիմքերով զարգացնելուն, այդ տնտեսությունը կոոպերացման յենթարկելու և նրա տեխնիկական մակարդակը բարձրացնելու միջոցով. այստեղ ի նկատի պետք է ունենալ, որ միայն այդ պայմաններում հնարավոր կը լինի կուլակին չեզոքացնել և պայքարել նրա աճող քաղաքական ձգտումների դեմ։

2. Գյուղում Կոմսոմոլի ուշադրության կենտրոնը պետք է լինի մարդկանց նոր կադրեր աճեցնել և դաստիարակել. այդ կադրերը պետք է ընդունակ լինեն հաջողությամբ աշխատել գյուղը կոոպերացման յենթարկելու, կամավոր հիմունքներով առանձին գյուղացիական տնտեսությունները կոլեկտիվ տնտեսությունների մեջ միացնելով։

Խնդիրը գլխավորապես նրա մեջ է կայանում, վոր յերիտասարդության անհատական շահերը—այն է տնտեսությունը բարձրացնելու ձգտումները՝ իր նյութական դրությունը լավացնելու, կուլտուրական մակարդակը բարձրացնելու անհատական շահերը կարելի լինի կապել գյուղական տնտեսության կոլեկտիվիզացիայի և ամբողջ սոցիալիստական շինարարության ընդհանուր խնդիրների հետ։

3. Գյուղը կուլտուրապես և տնտեսապես վերակազմելու մեջ Կոմսոմոլի մասնակցությունը այն ժամանակ միայն հաջողություն կունենա, յեթե միության գյուղացի անդամները պարզ ու վորոշ հասկանան, վոր ժողովրդական տնտեսության սիստեմի մեջ առաջավոր ղեկավար դերը պատկանում է արդյունաբերությանը և վոր գյուղական տնտեսության զարգացումը նպաստում է ինդուստրիալիզացիայի թափի ուժեղացմանը, վոր միայն գյուղացիության մասսայական կոոպերացման միջոցով է հնարավոր գյուղը մտցնել սոցիալիստական շինարարության ընդհանուր հունի մեջ, և վերջապես, վոր միայն կոոպերացման միջոցով հնարավոր է գյուղի չունևոր խավերի կյանքի մակարդակը բարելավել։

## Գյուղացի յերիտասարդության գյուղատնտեսական կրթությունը

4. Գյուղական տնտեսությունը վերակազմելու խնդիրների հետ անմիջապես կապված են գյուղացի յերիտասարդության գյուղատնտեսական կրթության հարցերը։ Հենց այդ հարցերն էլ կարող են և պետք է այն ողակը լինեն, վորը անհատական, մասնավոր շահերը (գյուղացի յերիտասարդության նյութական դրության բարելավումը) կապում է հասարակական, կոլեկտիվ շահերի հետ, մեր զարգացման և շինարարության ընդհանուր խնդիրների հետ։

5. Գյուղացի յերիտասարդության գյուղատնտեսական կրթության աշխատանքների գլխավոր տեղը



առաջվա նման բռնում են Գյուղացիական Յերիտասարդության Դպրոցները (ԳՅԵԴ—ШКМ)։ Այդ ուղղությամբ Կոմսոմոլի գործնական խնդիրն է վորակով լավացնել այդ դպրոցները ու նախ և առաջ ագրոնոմիական ու հասարակական-քաղաքական աշխատանքներն ուժեղացնել. միջոցներ ու հնարավորություններ ստեղծել, վոր առաջին հերթին Գյուղացիական Յերիտասարդության Դպրոցներում սովորելու հնարավորություն ունենան յերիտասարդության չքավոր և բատրակ խավերը։ Կոմսոմոլի գլխավոր անելիքներից մեկը պիտի լինի լայնացնել այդ դպրոցների ցանցը և Կոմսոմոլի բջիջների ու կոմիտեների ուշադրությունը ուժեղացնել այդ դպրոցների նկատմամբ։

6. Գյուղացիական Յերիտասարդության Դպրոցները խրախուսելու հետ միասին, Կոմսոմոլի գյուղական կազմակերպությունները իրենց ամենօրյա գործնական խնդիրը պիտի դարձնեն կանոնավորել գյուղատնտեսական կրուժոկների աշխատանքը բարելավելու, նրանց ցանցը լայնացնելու հարցերը. գյուղական կազմակերպությունները մեծ ուշադրություն պիտի դարձնեն կանոնավորելու կրուժոկների ղեկավարության գործը և կարգավորելու նրանց գործնական—ցուցադրական աշխատանքները։

Դրա հետ միասին անհրաժեշտ է, վորպես փորձ, ստեղծել յերեկոյան գյուղացիական դպրոցներ և կուրսեր, նրանց աշխատանքը տանելով Խորհրդային Ադրբեջանի գյուղական տնտեսության առանձնահատկություններին համապատասխան (բամբակ և այլն)։

7. Գյուղացի յերիտասարդության բնորոշ պահանջը պիտի համարել նրա ձգտումը՝ վոչ միայն հանրակրթական քաղաքական կրթություն, այլ և կոնկրետ, մասնագիտական գիտելիքներ ստանալու, վոր հարկավոր են նրա կյանքում և նրա տնտեսության մեջ տարվող աշխատանքների ժամանակ։ Անհրաժեշտ է վճռականապես հնգամյա դպրոցները դարձնել գյուղատնտեսական թեքում ունեցող դպրոցներ. անհրաժեշտ է գյուղատնտեսական տեխնիկումները բարելա-

վել, ուսումնական ծրագիրը հարմարեցնել գյուղական տնտեսության առանձնահատկություններին. ստեղծել տրակտորիստների կուրսերի ցանց. խորհրդային տընտեսություններին կից կազմակերպել գյուղատնտեսական աշակերտության դպրոցներ և դրանց համար առողջ սոցիալական կազմ հավաքել:

## Պայքար կուլտուրական գյուղի յեվ տնտեսությունը կուլտուրապես տանելու համար

8. Կոմսոմոլի մասնակցությունը նոր գյուղի շինարարության գործում պահանջում է Կոմսոմոլի գյուղացիական մասի կողմից պարզորոշ հասկացողություն (գործնականորեն և թեորետիկապես) գյուղը զարգացնելու և վերակազմելու համար: Կոմսոմոլի գյուղացիական կազմակերպությունները գյուղը վերակազմելու գործում նախաձեռնող և առաջնահերթ պիտի լինեն: Խնդիրը կայանում է վոչ միայն նրանում, վոր գյուղացի կոմսոմոլիստների տնտեսությունները օրինակելի հիմքերի վրա դրվեն, այլև նրանում, գլխավորապես, վոր գյուղական տնտեսությունը վերակազմելու աշխատանքների մեջ քաշվեն գյուղի չունևորների և միջակների լայն խավերը: Այդ տեսակետից Կոմսոմոլի կազմակերպչական աշխատանքը պիտի ընթանա կոմսոմոլիստ-տնտեսների խորհրդակցության, կուլտուրնիկ-գյուղացիների հետ միասին կոմսոմոլիստների գյուղատնտեսական կոնֆերանսների, լավ տնտեսական բջիջի, գյուղատնտեսական կրուժոկի, լավ կոմսոմոլիստ-տնտատիրոջ համար կոնկուրսների միջոցով և այլն:

9. Գյուղի վերակազմությունը և գյուղական տնտեսությունը կուլտուրական հիմքերով տանելու գործը վոչ մի կերպ չի կարելի բաժանել գյուղը բարեշինելու աշխատանքից: Կոմսոմոլի հասարակական—օգտակար աշխատանքը պիտի գործի պրոպագանդա լինի և փորձնական—ցուցադրական բնույթ կրի: Կուլտուրական գյուղ ստեղծելու համար մղվող պայքարում Կոմսոմոլի



աշխատանքի հիմնական մասը պիտի կազմի գյուղը բարեշինելու կոնկրետ աշխատանքը, այսինքն՝ ագրոպրոպագանդան, պայքար մաքրության անձնական մաքրասիրության համար, հասարակական օգնության ամենապարզ ձևերը կյանքի մեջ մտցնելու նախաձեռնություն (հասարակական բերքը պահպանել և հավաքել, ճանապարհները, կամուրջները, քյահրիզները, ջրհորները նորոգել, ցուցադրական դաշտը հասարակական ուժերով հերկել, ծառատնկություն և այլն):

10. Գյուղական տնտեսության մեջ կոմսոմոլի մասնակցության ամբողջ աշխատանքը հնարավոր չե, յեթե սերտ կապ չկա բջիջների և գյուղի կուլտուրական ուժերի ու գյուղական տնտեսության ասպարեզում մասնագետների մեջ: Կոմսոմոլի բջիջների աշխատակցությունը գյուղի կուլտուրական ուժերի հետ (գյուղատնտեսի, ուսուցչի, կուլտուրական գյուղացու) և նրանց օգտագործելը պիտի տարվի այնպես, վորպեսզի այդ կուլտուրական ուժերը գրավվեն մասնակցելու գյուղատնտեսական կրուժոկների աշխատանքներին, զանազան գյուղատնտեսական խորհրդակցությունների, այդ ուժերի խորհուրդները գործադրել սեփական տընտեսության մեջ, նրանց մասնակից անել գյուղացիական, գյուղատնտեսական կուրսերի աշխատանքներին, փորձնական ցուցադրական հողամասեր և գյուղատընտեսական ցուցահանդեսներ կազմակերպելուն և այլն:

## Կոմսոմոլը յեվ գյուղական տնտեսության կոոպերացում—կոլեկտիվացումը

11. Կոոպերացիայի շինարարության գործում կոմսոմոլի կողմից կուսակցությանը ցույց տրվող օգնությունը պիտի կենտրոնացած լինի գյուղատնտեսական, վարկային և կուստարային-զբաղմունքային կոոպերացիաների վրա: Կոմսոմոլի գյուղական կազմակերպությունները պիտի իրենց անելիքը համարեն իրենց տնտեսությունները կոլեկտիվ և կոոպերատիվ հիմունքներով վերակազմելու, ամբողջ միության հասա-

րական կարծիք ստեղծելով օրինակելի տնտես, հասարակական գործիչ, կոոպերատոր կոմսոմոլիստի ոգտին, գյուղի ամբողջ տնտեսական կյանքի և առաջին հերթին կոոպերացիայի տնտեսական աշխատանքի վերաբերմամբ բջիջների կողմից ընդհանուր ուշադրության ոգտին։

12. Կոմսոմոլի գյուղական կազմակերպությունները գյուղական տնտեսությունը բարձրացնելու և կոոպերացման յենթարկելու աշխատանքներով ամենից առաջ և ամենամեծ չափերով պիտի ընդգրկեն չունեվորներին և բատրակներին, վորոնք իրենց տնտեսությունն ունեն, կոոպերացնելով նրանց միջակների տնտեսությունների հետ միասին։ Կոմսոմոլի բջիջները չունևորների տնտեսությունները բարձրացնելուն պիտի աջակցեն կոլեկտիվ տնտեսություններ, արտադրական արտելներ, մեքենային և մելիորատիվ ընկերություններ կազմակերպելու, տնտեսությունը տանելու կուլտուրական ձևեր մտցնելու, բազմադաշտյան սիստեմին անցնելու փորձնական—ցուցադրական պրոպագանդային և այլ միջոցներով։ Դրա հետ միասին կուսբջիջների ղեկավարությամբ և համապատասխան կազմակերպությունների միջոցով անհրաժեշտ է ոգնել չունևորներին՝ արտոնություններ ստանալու և այդ արտոնությունները ոգտագործելու հողաշինարարության ժամանակ և կոոպերացիայի մեջ մտնելու. չունևորներին պիտի ոգնել նաև տնտեսական կարիքների համար վարկեր ստանալու։

13. Կոոպերատիվ աշխատանքի մեջ Կոմսոմոլի մասնակցության հիմնական մոմենտները հետևյալը պիտի համարել.— ուսումնասիրել կոոպերացիայի թեորիան և պրակտիկան. ուժեղացնել յերիտասարդության լայն մասսաների և առաջին հերթին՝ գյուղացիության ու կոմսոմոլիստների կոոպերացման գործնական աշխատանքները. կանոնավորել ղեկավարությունը թե կոոպերատիվ օրգաններում ընտրված կոմսոմոլիստների և թե ներկայացուցիչների ու պրակտիկանտների վրա. մեծ ուշադրություն դարձնել կոոպերատիվ հար-



ցերին ինչպես միութենական, այնպես էլ Կոմսոմոլի կոմիտեների և բջիջների ընդհանուր աշխատանքների մեջ։

14. Կոմսոմոլի գյուղական կազմակերպությունները հատուկ ուշադրություն պիտի դարձնեն գյուղփոխոգկոմների միջոցով կոլեկտիվ, աշխատավորական փոխադարձ ոգնություն կազմակերպելու հարցերին։ Միության բջիջները մասնակցելով գյուղփոխոգկոմների աշխատանքներին, գյուղացիության չունևոր և միջակ խավերին, մանավորապես յերիտասարդությանը և առաջին հերթին կոմսոմոլիստներին պիտի քաշեն փոխոգկոմների մեջ վորպես անդամներ. միության բջիջները պիտի ոգնեն գյուղփոխոգկոմներին՝ ֆոնդեր ստեղծելու և ինվալիդների, կարմիր-բանակայինների ընտանիքների ու կարիքի մեջ յեղած տնտեսությունների համար փոխադարձ ոգնություն կազմակերպելու։

## Ղեկավարության հարցեր յեվ առանձին կարեվորագույն միջոցներ

15. Գյուղական տնտեսության և գյուղի կոոպերացման մեջ Կոմսոմոլի մասնակցության գործում հատուկ կարևոր դերը պատկանում է միութենական ղեկավարությանը։ Անհրաժեշտ է, վորպեսզի Կոմսոմոլի կոմիտեների ղեկավար գործունեությունը կոնկրետ բնույթ կրի և կապակցված լինի տվյալ ռայոնի գյուղական տնտեսության զարգացման առանձնահատկությունների հետ։ Տեղական կոմիտեները պիտի խրախուսեն և ընդհանրացնեն բջիջների հասարակական—ոգտակար գործերի փորձը, հատկապես գյուղական տնտեսության ասպարեզում ստացված փորձերը, տարածելով այդ փորձերը մյուս բջիջների և ռայոնների վրա։

16. Կոմսոմոլի կոմիտեները ղեկավարելով գյուղական տնտեսության մեջ բջիջների մասնակցության աշխատանքները, լայն կերպով պիտի ոգտագործեն կենդանի ղեկավարության այն ձևերը, վոր դրական

արդյունքներ են տվել. այդ ձևերն են.—կուլտուրնիկ-կոմսոմոլիստների խորհրդակցություններ, խորհրդակցություններ ջրային հարցերի, բամբակաբուծության և կենդանաբուծության հարցերի մասին, նույնպես և մասնագետների խորհրդակցություններ Կոմսոմոլի կոմիտեների կից (գյուղատնտեսների, հողի և անտառի գործիչների, անասնաբույժների և այլն)։ Դրա հետ միասին հարկավոր է ամեն կերպ վերացնել գյուղացի յերիտասարդության մի վորոշ մասի կողմից քաղաքներն անցնելու ձգտումը, պարզաբանելով նրանց իրենց անելիքները գյուղական տնտեսությունը բարձրացնելու գործում, նույնպես և միջոցներ փնտրել կարիքի մեջ ընկած չունևոր տնտեսություններին ոգնություն կազմակերպելու համար։

17. Ավելի մեծ ուշադրության են արժանի ստորին ապարատի գյուղատնտեսական նախապատրաստության հարցերը։ Այս աշխատանքը պիտի ընթանա գլխավորապես գյուղական տնտեսության հարցերի շուրջը ակտիվի հրահանգչական խորհրդակցություններ հրավիրելու, գյուղատնտեսական գրականության վրա անհատական աշխատանքի միջոցով. նույնպես և ստորին ակտիվին ծանոթացնելով կուսակցության վորոշումների հետ՝ գյուղական տնտեսության զարգացման և վերակազմության հարցերի մասին։ Դրա հետ միասին գյուղական բջիջներին ոգնություն հասցնելու համար հարկավոր է ձգտել, վորպեսզի գյուղատնտեսական հանրամատչելի գրականություն հրատարակվի և այդ գրականությունը մտցրվի գյուղերը։

18. Պիոներական կազմակերպությունը կոչված է հիմնականում ծառայել կուլտուրական գյուղացի-կոոպերատորների նոր կադրեր դաստիարակելու նպատակներին. դրա համար էլ այնպես պիտի անել, վոր պիոներները գյուղական տնտեսությունը կուլտուրականորեն տանելու համար տարրական գիտելիքներ ստանան։ Պիոներական խմբերի գյուղատնտեսական աշխատանքը պիտի կապակցված լինի Կոմսոմոլի բջիջների գործնական աշխատանքների և դպրոցների աշխատանքների



հետ, դրա մեջ մասնակից անելով նաև պիոներկազմակերպությունից դուրս գտնվող չկազմակերպված յերեխաներին։

19. Գյուղական տնտեսությունը ավելի բարձր կուլտուրական աստիճանի հասցնելու աշխատանքների մեջ Կոմսոմոլի մասնակցությունը պիտի տարվի բջիջների և աղջիկների մասնակցությամբ, այդ աշխատանքի մեջ քաշելով գեղջկուհի—աղջիկներին։ Անհրաժեշտ է այնպես անել, վոր գյուղացի աղջիկները մասնակցեն գյուղատնտեսական կրուժոկների, խորհրդակցությունների և այլ աշխատանքների, դրա հետ միասին աղջիկներին մասնակից անելով Գյուղացիական Յերիտասարդության Դպրոցների աշխատանքին։ Գյուղացի աղջիկներին քաշելով գյուղական տնտեսության ընդհանուր աշխատանքներին մասնակցելու, հարկավոր է ամեն կերպ նպաստել և խրախուսել տնային տնտեսություն անելու, գորգագործական և ջուլհակային կրուժոկներ և արտելներ կազմակերպելու աշխատանքները, աղջիկներին քաշելով կոոպերացիայի ղեկավարն որգանների աշխատանքներին մասնակցելու գործի մեջ և այլն։

ՆԱԽԱԳԻԾ

# Ադրբեջանի պիոներական շարժման կացությունն ու մոտակա խնդիրները

*(Ադրլենկոմյերիտմիության 2-րդ կոնֆերանսում ընկ. ընկ. Դանիելյանի և Մուրադովի զեկուցումների թեզիսները):*

1. Ադրբեջանի պիոներական կազմակերպության կազմակերպության կացությունը Ադրլենկոմյերիտմիության 2-րդ կոնֆերանսին՝ բնորոշվում է հետևյալ հիմնական նվաճումներով.—խմբերի աշխատանքի բովանդակությունը վորոշ չափով բարելավվել է. մասամբ անցել են կոնկրետ անելիքների սիստեմին. խմբերը և ֆորպոստները կազմակերպչորեն ձևավորվել են և ֆորպոստ-խմբերի աշխատանքն ու դպրոցների աշխատանքը կապակցվել իրար հետ. կազմակերպությունը նորմալ կերպով աճել է. վորոշ նվաճումներ են ձեռք բերվել կուլտուրական ուժերը պիոներ աշխատանքին մասնակից անելու գործում. խմբերի հասարակական—օգտակար աշխատանքի դրությունը բարելավվել է. պիոներների ամառային կազդուրիչ մասսայական աշխատանքը լայնացել է. վորոշ չափով լավացել է Կոմսոմոլի ղեկավարությունը և պիոներ-կազմակերպությունների մեջ կոմսոմոլիստական կորիզը մեծացել:

2. Միայն դրական կողմերը թվելով չի սպառվում պիոներկազմակերպությունների դրության գնահատականը: Կազմակերպության հիմնական թերությունները և թույլ կողմերը արտահայտվում են հետևյալի մեջ.—պիոներ-կազմակերպության աշխատանքի բովանդակությունը չի համապատասխանում յերեխաների մասսաների բազմատեսակ պահանջներին. խմբերի հասարակական քաղաքական աշխատանքը կանոնավոր չէ և այդպիսին բացակայում է. ղեկավարները (вожатые) թույլ են նախապատրաստված և շուտ-շուտ փոխվում են. կուլտուրական ուժերը բավարար չափով չեն աշխատանքի մեջ քաշված. Կոմսոմոլը դեռ բավարար ղեկավարություն և ոգնություն չի ցույց տալիս պիոներ-կազմակերպությանը. այդ աշխատանքի մեջ բավարար չափով չեն մասնակցում կուսակցական բջիջները, հատկապես գյուղական բջիջները:

3. Ներկա պայմաններում պիոներ-կազմակերպությունների ամենակարևոր խնդիրները պիտի լինեն առաջին հերթին հետևյալները.—աշխատանքը աշխուժացնել և հարմարեցնել յերեխաների մասսաների իսկական պահանջներին, ամբողջ կազմակերպությունը պիտի անցնի կոնկրետ անելիքների սիստեմին. խրախուսել պիոներների ինիցիատիվան և ինքնագործունեությունը. խմբերի աշխատանքը հարմարեցնել պիոներ-կազմակերպության զանազան հասակների գրուպպաներին:

4. Պիոներ-աշխատանքի բովանդակությանը հարկավոր է հասարակական բնույթ տալ, ուշադրությամբ հետևելով աշխատանքի դաստիարակչական արդյունքներին: Անհրաժեշտ է լուրջ ուշադրություն դարձնել խմբերի աշխատանքի բովանդակությանը և աշխատավորական գիտելիքներ տարածելուն, գլխավորապես գիտելիքներ ելեքտրականության, ռադիոյի, ավիացիայի մասին և ամեն կերպ զարգացնել տղաների տեխնիքական ինիցիատիվան և հնարագիտությունը: Նայած պայմաններին, յուրաքանչյուր պիոների պիտի հնարավորություն տրվի զբաղվել տեխնիկայի ասպարեզում իրան հետաքրքրող յուրաքանչյուր գործով, այդ աշխատանքը անցկացնելով ողակի ղեկավարությամբ: Դրա հետ միասին անհրաժեշտ է տներում տեխնիկական անկյուններ ստեղծել, կազմակերպել զանազան կրուժոկներ և արհեստանոցներ՝ ակումբների և խմբերի կից, ուսումնասիրել պիոներների օրենքները և սովո-

րությունները, աշխատանքներ կազմակերպել անխնամ յերեխաների մեջ և այլն։

5. Խմբի հիմնական աշխատանքը կայանում է նրանում, վոր ինչքան հնարավոր է ավելի մեծ թվով պիոներներ գրավվեն խմբի գործնական աշխատանքի մեջ։ Այդ աշխատանքը պիտի կազմակերպվի, կոլվարների, ողակների, պատի թերթերի խմբագիրների խորհրդակցություններ հրավիրելու միջոցով, աշխատանքի առանձին տեսակների շուրջը պիոներների խորհրդակցությունների և կոնկրետ անելիքների առանձին տեսակները մշակելու միջոցով։

6. Խմբի աշխատանքի սիստեմի մեջ հատուկ նշանակություն ունի պիոներներին ինտերնացիոնալիստական դաստիարակություն տալը։ Այդ աշխատանքը պիտի տարվի պատանի պիոներներին բատրակային կազմակերպությունների աշխատանքներին ծանոթացնելու, նրանց հետ գրավոր կապ հաստատելու և համապատասխան գրականության ընթերցումների միջոցով։ Անհրաժեշտ է ամեն կերպ խրախուսել առանձին ազգային խմբերի մեջ հաստատված կապը, փոխադարձ կերպով իրար աշխատանքների հետ ծանոթանալու, փորձառության փոխանակության, միացյալ հավաքույթներ կազմելու, ցերեկույթների, զբոսանքների, եքսկուրսիաների և աշխատանքի մեջ փոխադարձաբար ոգնելու և աջակցելու միջոցով։

7. Դպրոցի զարգացումը և ամրացումը, նրա դերի ուժեղացումը՝ վորպես աճող սերնդի կրթության և դաստիարակության պետական ձև, պահանջում է ավելի մեծ չափով ուժեղացնել և ամրապնդել պիոներ-կազմակերպությունը դպրոցում։ Անհրաժեշտ է ամրապնդել ֆորպոստների ներքին աշխատանքը, բոլոր պիոներներին քաշել ֆորպոստների ակտիվ աշխատանքի մեջ, աջակցել ուսման մեջ պիոներների անհատական առաջադիմությունը բարձրացնելուն և այլն։ Դրա հետ միասին անհրաժեշտ է նույնպես ձգտել, վորպեսզի աշակերտները անցնեն դպրոցի ամբողջ ծրագիրը, պիոներները կանոնավոր կերպով հաճախեն դպրոցական



պարապմունքներին և աջակցություն ցույց տալ դպրոցի աշխատանքին, դպրոցներում չսովորող յերեխաների մեջ անգրագիտությունը վերացնելու համար։

8. Գյուղատնտեսական և ագրոպրոպագանդային աշխատանքը պետքե յերեխաների կոմունիստական կազմակերպության գյուղական խմբերի աշխատանքի մեջ առաջին տեղերից մեկը բռնի։ Խմբի գյուղատնտեսական աշխատանքը կապակցելով տվյալ ռայոնի կամ գյուղի Կոմսոմոլի գյուղատնտեսական աշխատանքի և դպրոցի աշխատանքի հետ, անհրաժեշտ է այդ աշխատանքը անցկացնել թե անհատորեն և թե կոլլեկտիվ կերպով, դրա մեջ մասնակից անելով նաև անկազմակերպ յերեխաներին։ Պիոներները պիտի աշխատեն իրենց ստացած փորձառությունը փոխադրելու իրենց և ուրիշ գյուղացիների ընտանիքները։

9. Խմբի աշխատանքի բովանդակությունը մեծ չափերով կարելի է թեթևացնել՝ կուլտուրական ուժերին (մանկավարժներին և բժիշկներին) մասնակից անելով պիոներ-կազմակերպության աշխատանքներին։ Պիոներ-խմբի մեջ կուլտուրական ուժերի մասնակցությունը պիտի արտահայտվի նրանով, վոր նրանք կազմակերպեն խմբերի կուլտուրական աշխատանքը, խելացի հանգիստ կազմակերպեն, խորհուրդներ և ոգնություն ցույց տան կոլվարին՝ կոնկրետ անելիքների մեթոդներն անցկացնելու համար և այլն։

10. Պիոներներին և յերեխաներին կազդուրելու համար պիոներ-կազմակերպության աշխատանքը պիտի կատարել բացոդյա, մանավանդ ամառը· դրա համար պետք է լայն կերպով տարածել ամառային և ըստ հնարավորության ձմեռային հրապարակներ, կազմակերպել ամառային լողարաններ, մասսայական ըզբոսանքներ, եքսկուրսիաներ և ամառային մարզանքի պարապմունքներ։ Դրա հետ միասին ճամբարները (լագեր) պիտի պիոներների կազդուրման մասսայական ձև մնան, ամեն կերպ աջակցելով և խրախուսելով սանատորային տիպի ճամբարներ ստեղծելու գործը (ինչպես որինակ՝ Բաքվում)։ Գյուղում հատուկ ուշա-

դրություն պիտի դարձնել պիոներների մեջ առողջապահական—մաքրասիրական սովորույթներ տարածելուն, յերեխաների առողջությունն ամրապնդելու աշխատանքը զարգացնելով հրապարակների, եքսկուրսիաների և զրույցների միջոցով։

11. Պիոներների և անկազմակերպ յերեխաների համար խելացի հանգիստ, խաղեր և զվարճալիքներ պիտի սարքել մասսայական տոնակատարություններ, կինո-ցերեկույթներ, յերաժշտական խմբակցություններ և կենդանի լրագիրների յելույթներ կազմակերպելու միջոցով։ Դրա հետ միասին պիտի աշխատել, վորպեսզի հանգիստը և զվարճալիքները պիոներների և անկազմակերպ յերեխաների համար ավելի պայծառ և հետաքրքիր լինեն։

12. Պիոներների և յերեխաների մեջ զինվորական պրոպագանդան պիտի տարվի հետևյալ կերպ.—կազմակերպել կարճատև և յերկարատև արշավանքներ, զինվորական խաղեր, փոխադարձ կապ ստեղծել պիոներ-կազմակերպության և կարմիր-բանակային զորամասերի միջև, համապատասխան թեմաներով զրույցներ տանել, զինվորական յերգեր տարածել և յերեխաների տիրեր կազմակերպել, այդ աշխատանքի մեջ գրավելով կարմիր-բանակայիններին և ՈՍՈ-Ավիախիմի անդամներին։

13. Պիոներ-աշխատանքի մեջ մեծ ուշադրություն պիտի դարձնել կազմակերպության աճումը վորակապես ամրապնդելու վրա։ Շարունակելով պիոներ-կազմակերպության աճումը և ընդգրկելով աշխատավորների բոլոր խավերի, առաջին հերթին բանվորների, բատրակների և չունևորների յերեխաներին, նույնպես և աղջիկներին՝ հատկապես թրքուհիներին, գլխավորապես գոյություն ունեցող խմբերի հաշվին, անհրաժեշտ է ծանրության կենտրոնը փոխադրել պիոներ-կազմակերպության աճումը կանոնավորելու վրա։ Նոր խմբեր կարելի է կազմակերպել միայն այն ժամանակ, յեթե ուժեր և մշտական ղեկավարության հնարավորություններ կան։



14. Պիոներ-կազմակերպության հաջողությունը մեծ չափերով կախված է կոլվարների կազմի վորակից։ Կոլվարներ պիտի պատրաստել և նախապատրաստել հանրապետական մաշտաբով կուրսեր, դասընթաց-հավաքույթներ, կոլվարների համար սեմինարներն կազմակերպելու և կոլվարների մեջ ինքնազարգացման աշխատանքները դնելու միջոցով։ Դրա հետ միասին անհրաժեշտ է ուշադրություն դարձնել կոլվարներին Կոմսոմոլի աշխատանքի ուրիշ ձևերից թեթևացնելու և նրանց առողջության դրության վրա։

15. Ինկատի ունենալով հոկտեմբերիկների գրուպաների աշխատանքների կարևորությունը, անհրաժեշտ համարել զբաղվելու պիոներ-աշխատանքի այդ մասի ուսումնասիրությամբ և զարգացումով, այդ աշխատանքը ղեկավարելու համար ակտիվ կոմսոմոլխաների և կուսակցականների միջից ավելի պատրաստված ղեկավարներ առաջ քաշել, դրա հետ միասին գլխավոր ուշադրությունը դարձնելով հոկտեմբերիկների մեջ դաստիարակչական աշխատանքի ամենահասարակ ձևեր ու խելացի զվարճալիքներ, հանգստի ժամեր, խաղեր և այլն կազմակերպելու վրա։

16. Պիոներ-կազմակերպության աշխատանքի մեջ մեծ ուշադրության են արժանի ամբողջ պիոներ-աշխատանքին մասնակցելու և գլխավորապես նրան նյութական ոգնություն ցույց տալու հարցերը պրոֆեսիոնալ և այլ հասարակական կազմակերպությունների կողմից։ Մասնավորապես պիտի կազմակերպել պիոներների մասնակցությունը պրոֆմիությունների և պետական որգանների աշխատանքներին՝ յերեխաների աշխատանքի պահպանության տեսակետից, նույնպես և բացատրել յերեխաներին խորհրդային որենսդրության հարցերը։ Դրա հետ միասին հարկավոր է աշխատավորների հասարակական կարծիք ստեղծել պիոներ-կազմակերպության աշխատանքներին ոգնություն ցույց տալու համար։

17. Անհրաժեշտ է աշխատել, վորպեսզի Կոմսոմոլի կողմից ղեկավարությունը պիոներ-կազմակերպու-

թյան վրա վճռականորեն ուժեղացվի և բարելավվի, այդ ղեկավարությունը ավելի կենդանի և կոնկրետ դարձնելով։ Բոլոր դիրեկտիվները պետք տալ ի նկատի ունենալով տեղական փորձերը և այդ փորձերի փոխանակությունը։ Դրա հետ միասին պետք աշխատել կոմսոմոլի ավելի լավ ուժերը պիոներ-աշխատանքի համար առաջ քաշելու, մեծացնելով կոմսոմոլիստական կորիզը. անհրաժեշտ ե, վորպեսզի կուսակցական կազմակերպությունները մեծ մասնակցություն ցույց տան պիոներ-աշխատանքին։

18. Անհրաժեշտ համարել համապատասխան կանոնադրություն մշակելու պիոներ-աշխատանքի համար՝ մանկատներում։ Դրա հետ միասին անհրաժեշտ ե ըդբաղվել մանկատները պիոներական տներ անվանելու հարցով, վորովհետև մանկատներում յերեխաները բոլորն ել պիոներներ են։

---



# ԲԱՆԱՁԵՎ

## Կարմիր Ռազմական Նավատորմի վրա կոմսոմոլի շեֆային աշխատանքները ուժեղացնելու մասին արված զեկուցման շուրջը

1. Ադրլենկոմյերիտմիությունը զգալի հաջողություններ ե ձեռք բերել Կարմիր ռազմական նավատորմի վրա ունեցած շեֆային աշխատանքի մեջ։ Այդ նվաճումների ավելի աչքի ընկնող ապացույցները հետևյալները կարելի ե համարել.—Կոմսոմոլիստ—կարմիր-նավատորմայինների հասարակական-քաղաքական ակտիվությունն աճել ե. այդ աշխատանքի մեջ կազմակերպչական վոչ պարզ կողմերը վերացվել են. շեֆության նոր ձևեր են ստեղծվել ու ամրապնդվել. քաղաքական որգանների ուշադրությունը դեպի կոմսոմոլիստ—կարմիր-նավատորմայինների մեջ տարվող աշխատանքը՝ բարձրացել ե. քաղաքացիական կազմակերպությունները նավատորմի մասերի հետ կապելու գործնական աշխատանքները բարելավվել են։

Դրա հետ միասին կան նաև մի շարք թերություններ, գլխավորապես, աշխատանքի փորձը հաշվեառնելու և այդ աշխատանքը աշխուժացնելու գործում։

2. Յելնելով դրանից, Լենինյան Կոմսոմոլի Ադրբեջանյան 2-րդ կոնֆերանսը տեղական կազմակերպությունների ուշադրությունը հրավիրում ե հետևյալի վրա.

ա) Կարմիր-նավատորմայիններին ավելի մեծ չափերով մասնակից անել ընդհանուր-քաղաքական հարցերի քննությանը, մոտեցնել արտադրության կյանքին, ծանոթացնել ժամանակակից հիմնական հարցերի

հետ, նույնպես և պարզաբանել միության մեջ պրոլետարական ղեկավարության հարցերը։

բ) համաչափ կերպով զինվորական պրոպագանդա տանել Կոմսոմոլի մեջ և միության քաղաքացիական ու նավատորմային կազմակերպությունների միջև կապը ուժեղացնել։

գ) Նավատորմի մասերի մասսայական արտադպրոցական աշխատանքի մեջ ավելի մեծացնել պատանեկական տարրերը։

3. Այդ ուղղությամբ դրված խնդիրների մյուս հակառակ կողմը պիտի լինի—կոմսոմոլխաներին ավելի մեծ չափերով գրավել Նավատորմի շինարարության մեջ. այդ բանը պիտի կայանա նրանում, որ Նավատորմում միութենական դաստիարակչական աշխատանքները տանելուն ավելի մեծ օգնություն ցույց տրվի. ուսումնասիրել Կարմիր Նավատորմի սովորույթները, քաղաքացիական կազմակերպությունների կոմսոմոլխաներին քաշել ռազմագիտական աշխատանքների մեջ, ծանոթացնել նրանց ռազմական տեխնիկայի նվաճումների հետ, կանոնավորել բեռնավորման հարցը կոմսոմոլխա—կարմիր - նավատորմայինների մեջ և այլն։

4. Դրա հետ միասին կոնֆերանսը անհրաժեշտ է գտնում Կենտրոնական Կոմիտեյին կից պարբերաբար նավատորմի, գավկոմների և ռայկոմների գործիչների լայն խորհրդակցություններ հրավիրել բջիջների քարտուղարների հետ միասին, Ադրբեջանի Կոմսոմոլի շեֆային աշխատանքների փորձերը հաշվետվելու և ընդհանրացնելու համար։

5. Ադրբեջանի Լենկոմյերիտմիության զինվորական պրոպագանդայի ծավալումը պիտի տարվի հետևյալ ուղղությամբ.

ա) ձևակերպել և ամրապնդել Բանակի և Նավատորմի հետ կապի համար գոյություն ունեցող հանձնաժողովները, բջիջներում զինվորական պրոպագանդա տանելու գործը հանձնարարելով նրանց.



բ) անցնել աշխատանքը ավելի համաչափ կերպով տանելուն, այդ մտցնելով Կոմսոմոլի մասսայական աշխատանքների ընդհանուր հունի մեջ։

գ) յերիտասարդության գիտակցության մեջ հետաքրքրություն առաջացնել մասնակցելու ռազմածովային կրուժոկների աշխատանքին, ջրային մարզանքին, ռազմածովային խաղերին, ռազմագիտական ուժերը քաշել յերիտասարդության մեջ զինվորական պրոպագանդան տարածելու ընդհանուր աշխատանքներին։

դ) Կոմսոմոլի քաղաքացիական կազմակերպությունները մոտեցնել և ծանոթացնել կարմիր-նավատորմայինների կյանքին, կենցաղին և Նավատորմի ուշերային։

6. Կենտրոնական Շեֆային Հանձնաժողովը միջոցներ պիտի ձեռք առնի լավացնելու տեղական կազմակերպությունները Նավատորմի մասերի և նավերի հետ կապելու աշխատանքների վորակը. այդ բանը պիտի արվի հատկապես կանոնավորելու գրավոր և կենդանի կապը, Կոմսոմոլի ընդհանուր աշխատանքների մեջ կոմսոմոլխա—կարմիր-նավատորմայինների մասնակցությունը և այլն։

7. Շեֆային աշխատանքի դրության մասին Կոմսոմոլի ինֆորմացիան լավացնելու և այդ ուղղությամբ ունեցած փորձերը փոխանցելու համար, անհրաժեշտ է շեֆության աշխատանքների խնդիրները և կացությունը լուսաբանել «Մոլոդոյ Բոլշևիկ» և «Գենջ Իշչի» թերթերում և ընդհանրապես մամուլի էջերում։ Բացի դրանից, հարկավոր է տեղական կազմակերպություններին ինֆորմացիոն տեղեկություններ ուղարկել շեֆային աշխատանքի կացության մասին։

8. Կենտրոնական Շեֆային Հանձնաժողովը պիտի հսկի տեղական կազմակերպությունների աշխատանքի վրա՝ Նավատորմին նյութական օգնություն հասցնելու համար։ Բացի դրանից, համաչափորեն պիտի ուժեղացնել նյութական օգնությունը Կոմսոմոլի տեղական կազմակերպությունների կողմից։

9. Շեֆային ոգնության համար ստացվող բոլոր միջոցները պէտք կենտրոնացնել, շեֆության գործը ավելի կազմակերպված դնելով։ Կենտրոնացումը և կազմակերպվածությունը պէտք պահպանել նաև յենթաշեֆ մասերին գրականության մատակարարելու գործում։

10. Ընդգծելով վոր մի շարք կազմակերպություններ կատարել են Կոմսոմոլի համագումարների վորոշումները՝ հիդրո-զորամասի համար միջոցներ հավաքելու մասին, միջոցներ ձեռք առնել հիդրո-զորամասի համար շտապ կերպով միջոցներ հավաքելու և այդ միջոցները դարձնելու Կարմիր Նավատորմի կենցաղը բարելավելու ֆոնդ (Համամիութենական Լենինյան Կոմսոմոլի 5-րդ կոնֆերանսի վորոշումների հիման վրա)։

Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ
Անվան
Публичная Библиотека



2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0036925

Գինն է 25 կոպ.